Լևչենկո Հակոբյան, *պ.գ.թ., դոցենտ*
Հրաչիկ Ջավադյան, *պ.գ.թ., դոցենտ*

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Բանալի բառեր – գյուղատնտեսական կոոպերացիա, անասնապահություն, կոոպերատիվներ, պետական աջակցություն, գյուղական համայնքներ

Տնտեսական ռեֆորմից հետո անցած ավելի քան 23 տարիների ընթացքում կատարված դրականի հետ մեկտեղ առաջ են եկել մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումը շատ դեպքերում հնարավոր է գյուղացիների ջանքերի և ինչու չէ՝ նաև միջոցների միավորման արդյունքում: Կարևորագույն այս հիմնախնդրի իրականացումը առանձին դեպքերում հնրավոր է դառնում նաև զանազան միջազգային կազմակերպությունների և անձանց օգնության և ֆինանսական աջակցության միջոցով: Հայաստանում դրա կիրառման առաջին արդյունքներին և դրանց տնտեսագիտական մեկնաբանմանն է նվիրված սույն հոդվածը:

1991թ.-ին Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո գյուղատնտեսության ոլորտում ապապետականացման ու սեփականաշնորհման արդյունքում ձևավորված և այսօր գործող 339,2 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնց գյուղատնտեսական օգտագործելի հողերի միջին չափը 1.43 հա է, շուկայական տնտեսության ձևավորման ու զարգացման ներկա փուլում չեն կարողանում բռնել ժամանակի քննությունը և արդյունավետ գործել առանձին-առանձին՝ փոքր չափերի գործելու, պահպանողական մտածելակերպի, գյուղատնտեսական տեխնիկայի ու սարքավորումների պակասի, տեխնիկապես ու բարոյապես դրանց մաշված լինելու և բազմաթիվ այլ պատճառներով: Նման պայմաններու թերևս ճիշտ կլինի կոոպերատիվ շարժման ակտիվացման և արդյունավետ գործունեության իրականացման նպատակով ռեալ գնահատել ներկա պահին ձևավորված վիճակը և հնարավորությունները: Չնայած վերջին մի քանի տարում որոշ աշխուժացմանը, կտրտված է և շարքից դուրս է եկել հանրապետության բազմամյա տնկարկների գրեթե կեսը, գործնականորեն չեն արածեցվում բնակավայրերից հեռու գտնվող տասնյակ հազարավոր արոտավայրեր: Անհաջողության մատնվեցին գյուղատնտեսական մեծածախ շուկայի ստեղծման և հացահատիկի արտադրության ավելացման նպատակով հողերի կոնսոլիդացման ծրագրերը և այլն: Չի դադա-

ռում, այլ ընդհակառակը, նոր թափ է ստանում բնակչության և առաջին հերթին՝ երիտասարդության միգրացիան հանրապետությունից դուրս՝ այս անգամ արդեն նաև հեռավոր, սահմանամերձ և այլ անբարենպաստ պայմաններում գտնվող գյուղական բնակավայրերից: Համաշխարհային բանկի աջակցությամբ 2011թին Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի շրջանակներում սկսված արոտավայրերի օգտագործման բարելավման, անասնապահական սպառողական կոոպերատիվների ստեղծման, վերջիններիս գյուղ տեխնիկայով ապահովման, ուսուցումների և գործնական ցուցադրումների միջոցով գյուղացիների մտածելակերպի աստիճանական փոփոխության իրականացումն էլ հանդիսացավ վերոհիշյալ խնդիրների լուծման հիմնական ուղիները: Գյուղատնտեսության ոլորտի այս խնդիրների լուծման համակարգում Հեյֆեր Փրոջեքթ Ինտերնեյշնլ ծրագիրը կարևորելով դրանց դերը, որը բխում էր նաև իր առաքելությունից, համաձայնվեց համաֆինանսավորել և իր մասնակցությունն ունենալ դրանց լուծման գործընթացին:

Ծրագիրը հանդիսանում է համայնքի հզորացման և զարգացման ինտեգրացված մոտեցում, որտեղ բնակվող բնակչության ընդհանուր թիվը կազմում է 78,000 մարդ: Համայնքների ընտրության չափանիշներ են հանդիսանում.

- լեռնային շրջանների (բարձրադիր գոտիների) 500-3500 բնակիչ ունեցող գյուղերը, որտեղ անասնապահությունը հանդիսանում է կենսապահովման հիմնական աղբյուր տնային տնտեսությունների մեծ մասի համար:

Ծրագրի մասնակիցների մոտավոր թիվը թիրախային 55 համայնքներում կազմում է 4,400: Մեկ կոոպերատիվում միջինը 80 մասնակից: Ծրագրի մասնակից ֆերմերների ընտրության չափանիշը հիմնված է համայնքի արոտավայրերի օգտագործման և կոոպերատիվներին անդամակցության վրա: Յուրաքանչյուր ֆերմեր, ով օգտվում է համայնքի արոտավայրերից և պատրաստակամություն է հայտնել ներգրավվել կոոպերատիվի կազմում, համարվում է ծրագրի մասնակից:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՀ ԳԾԻԳ) կողմից: Հեյֆեր-Հայաստան կազմակերպությունն աջակցում է ծրագրի իրականացմանը՝ համայնքների բեռը թեթևացնելու նպատակով տրամադրելով մինչև 30% ֆինանսական օժանդակություն ծրագրի շահառու հանդիսացող համայնքային սպառողական կոոպերատիվներին, իրենց մասնաբաժինը հասցնելով 20%-ի:

Ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 21.33 միլիոն ԱՄՆ դոլար, որից Հայաստանի կառավարությունը կֆինանսավորի 5.33 միլիոն ԱՄՆ դոլարը: Միջազգային զարգացման ընկերակցության (ՄԶԸ) վարկի մարման ժամկետը 20 տարի է, ներառյալ 10 տարի արտոնյալ ժամկետ:

Ծրագրի իրականացման 5 տարիների ընթացքում մեծ հաշվով ակնկալվում էր.

- Մոտ 11մլն ԱՄՆ դոլարի չափով տարեկան հավելյալ արդյունքի ստացում,
- 58 հազար հա գյուղամերձ արոտների օգտագործման արդյունավետության մոտ 30% -ով բարձրացում,
- Լրացուցիչ ավելի քան 3000 հա վարելահողի մշակություն,
- Շուրջ 80 հազար հա հեռագնա արոտների ջրարբիացում,
- Միջդաշտային ճանապարհների վերակառուցման շնորհիվ 66 հազար պայմանական գլուխ անասունների կերով լիարժեք կերով ապահովում,
- Ոչ պակաս 20%-ով աշխատանքի արտադրողականության բարձրացում,
- ընդգրկված համայնքների բյուջեի մուտքերի 15-20% ավելացում:

Այս ամենի ապահովումը կարևոր մարտահրավեր կլինեն նաև գյուղական համայնքների հետագա զարգացման ռազմավարությունում:

Ծրագրի մեկնարկից 3 տարի անց Շիրակի, Տավուշի, Լոռու, Արագածոտնի, Գեղարքունիքի մարզերի լեռնային տարածաշրջանների 90 համայնքներում ոչ միայն ձևավորվել են արոտօգտագործողների 70-ից ավելի միավորումներ, այլև դրանք ստացել են թվով 99 տրակտորներ ու 365 գյուղատնտեսական սարքավորումներ, որոնք արդյունավետ կերպով օգտագործվում են անասունների կերի և կերակրման բազան բարելավելու ուղղությամբ: Դրանց միջոցով կոոպերատիվների կողմից 20-30տոկոս էժան սակագներով ծառայություններ են մատուցվում կոոպերատիվի անդամներին, աստիճանաբար փոխելով անդամների մտածելակերպը՝ մեկուսի, առանձին արտադրողից վերածելով միասնական և համատեղ ջանքերով արտադրություն իրականացնողների:

Համայնքները գրեթե 3 տարվա ընթացքում արդեն բավականին լուրջ ձեռքբերումներ ունեն արոտօգտագործողների միավորում ՍԿ-երի հիմնադրման և կայացման գործում: Այն կոոպերատիվները, որոնք ստացել են տեխնիկան և հասցրել որոշակի ծառայություններ մատուցել կոոպերատիվի անդամներին՝ 35-ից

14-ը, միայն առաջին տարում ապահովել են ծախսերի 24% խնայողություն, որը կարծում ենք, լավ ցուցանիշ է (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Տեխնիկա օգտագործած 14 կոոպերատիվների առաջին տարվա խնայողությունը

Գործող շուկայական գներով ծառայության վճար, դրամ	Փաստացի ծառայության վճար, դրամ	Խնայված գումար, դրամ	Խնայողության աստիճանը, %
7999112	6121397	1877715	24

Հեյֆերի 12 անկյունաքարերի, կոոպերատիվների զարգացման, արոտավայրերի կառավարման և հաշվապահության թեմաներով կազմակերպված դասընթացները որոշակի դրական տեղաշարժ են ապահովել կոոպերատիվի անդամների կարողությունների զարգացման և դրանք արտադրությունում արդյունավետ կիրառելու ուղղությամբ: Առանձնակի կարևորվում է Հեյֆերի աջակցության իրականացման այնպիսի նախապայմանի ապահովումը կոոպերատիվի կողմից, ինչպիսին նրա կողմից ներդրված գումարի 4 տարվա ընթացքում հավաքագրումն է՝ տրամադրված տեխնիկայով ծառայություններ մատուցելու միջոցով: Դա դրդում է կոոպերատիվներին հնարավորինս ինտենսիվ օգտագործել տեխնիկան, իսկ անդամներին օգնություն ակնկալողներից աստիճանաբար վերածել բիզնես մտածելակերպ ունեցող արտադրողների:

Բայց հասկանալի պատճառներով առկա են մի շարք խնդիրներ և դժվարություններ, որոնց լուծումն ու հաղթահարումը կնպաստի կոոպերատիվների արդյունավետ գործունեությանն ու հետագա զարգացմանը: Այդ խնդիրներն են.

1. Ուշ՝ այսինքն սեզոնից դուրս ստանալու պատճառով առաջին տարում տեխնիկան ընդհանրապես չի օգտագործվել 35 համայնքներից 21-ում, կամ 60%-ում, իսկ մնացածում դրանց օգտագործումը սկսվեց հաջորդ գյուղատնտեսական տարվանից,
2. Որոշ համայնքներում չափազանց շատ է մասնավոր տեխնիկան, և դժվար է ապահովել տնտեսապես ձեռնտու աշխատանքային ծավալ,
3. Առանձին կոոպերատիվներում անդամների մեծ քանակը, երբ կոոպերատիվն ի վիճակի չէ դեռևս առկա տեխնիկայով ծառայություն մատուցել բոլորին,

4. Համայնքների մի մասում, որտեղ գումարի 20%-ը կազմող համայնքի բաժնեմասը անտոկոս վարկի տեսքով տրամադրվել է ֆիզիկական անձանց կողմից և ենթակա է վերադարձման 4 տարվա ընթացքում, լրացուցիչ անհանգստություն է առաջացնում կոոպերատիվների մոտ՝ դրա և Հեյֆերի տարեկան բաժնեմասի հավաքագրման առումով: Չնայած դրան, բոլոր համայնքներն էլ խոստացել են անել առավելագույնը պայմանագրով նախատեսված ժամկետներում հավաքագրելու նախատեսված գումարները,
5. Համայնքների մի մասում Հեյֆերի հետ կնքված պայմանագրի մեկ տարվա ժամկետը լրանում է մինչև խոտհունձն ու դրանց հակավորումը, և կոոպերատիվը հնարավորություն չի ունենում ամբողջովին և ինտենսիվորեն օգտագործելու իրենց տրամադրված տեխնիկան, ծառայություններ մատուցելու և առավելագույնս հավաքագրելու գումարները: Ուստի, նրանք խնդրել են 1-1.5 ամսով երկարաձգել պայմանագրով նախատեսված ժամկետը հասցնելով մինչև հոկտեմբեր, իսկ առանձին դեպքերում՝ մինչև տարվեվերջ, որը հնարավորություն կտա կատարելու իրենց պայմանագրային պարտավորությունները:
6. Համայնքների փոքր մասում դեռևս ոչ մի ուսուցում չի կազմակերպվել: Արդյունքում դրանք հիմնականում տարբերվում են մնացածներից նրանով, որ կոոպերատիվի անդամների մոտ չկա ձևավորված հավատ ու վստահություն կոոպերատիվի նկատմամբ: Դասընթացների հնարավորինս շուտ կազմակերպելը կնպաստի անդամների որոշակի համախմբմանը և համեմատաբար կթեթևացնի կոոպերատիվի կայացման խնդիրները: Հարկ է նշել նաև, որ ամռան գյուղատնտեսական լարված շրջանում դասընթացների կազմակերպումը արդյունավետ չէ ինչպես մասնակիցների թվի ապահովման, այնպես էլ նրանց ուշադրությունը ներկայացվող հարցերի վրա կենտրոնացնելու առումով: Անհրաժեշտ է դասընթացները հնարավորինս կազմակերպել գյուղատնտեսական աշխատանքներից ազատ կամ թեթև ժամանակաշրջանում՝ «ուսուցանել ուսուցանողին» սկզբունքով, ներգրավելով համեմատաբար ակտիվ, առաջադեմ և բանիմաց անդամների, որի դեպքում արդյունքներն ավելի ակնառու են լինում: Պատահական չէ, որ համայնքների մի մասում ցանկություն ունեն կրկին մասնակցելու դասընթացներին:

7. Կարևոր է նաև Հայաստանում կամ արտերկրում փորձի փոխանակման սկզբունքով «Կառավարում և առաջնորդություն» թեմայով դասընթացի կազմակերպումը միայն կոոպերատիվի նախագահների համար, քանի որ նրանց գերազանց մեծամասնությունն անտեղյակ են կառավարման սկզբունքներից:
8. Շատ դեպքերում ցածր է կոոպերատիվի անդամների նախաձեռնությունը: Կոոպերատիվի անդամների մեծամասնությունը գտնվում է պասսիվ, անորոշ վիճակում, չի պատկերացնում, որ կոոպերատիվն իրենց կառույցն է, և ոչ թե նախագահինը: Ցածր է նախաձեռնողականությունը նաև կոոպերատիվների որոշ ղեկավարների մոտ: Կարևոր է առաջին իսկ հնարավորության դեպքում հաջողված դեպքերի տարածումն ու լավագույն փորձի փոխանակման կազմակերպումը:
9. Արոտավայրերի վարձակալական պայմանագրեր դեռևս չկան կնքված մի քանի համայնքներում, որտեղ կոոպերատիվների նկատմամբ դեռևս չկա ձևավորված վստահություն ու հավատ: Դա պայմանավորված է նաև նրանով, որ այս համայնքներում դեռևս չեն կազմակերպվել համապատասխան դասընթացներ:

Կոոպերատիվի կայացման ու զարգացման համար որպես կարևոր փորձ հարկ է նշել Ն. Սասնաշենի նախաձեռնությունը: Համայնքի որոշմամբ, պահուստային հողերից 60 հա վարձակալությամբ տրամադրվել է կոոպերատիվին 2013 թվականից մշակելու, լրացուցիչ եկամուտներ ստանալու և դրանք ի նպաստ կոոպերատիվի հետագա զարգացման օգտագործելու նպատակով:

10. Կոոպերատիվներում ստեղծվել է մի իրավիճակ, երբ նրանք Հեյֆերի հետ կնքված պայմանագրի համաձայն պարտավոր են տարեկան մատուցած ծառայություններից հավաքագրել և 4 տարվա ընթացքում կուտակել Հեյֆերի ներդրումներին համարժեք գումար, որն, ի վերջո, օգտագործվելու է կոոպերատիվի այս կամ այն կարիքի բավարարման նպատակով: Սակայն այսօրվա գործող օրենքներով այդ գումարի առկայությունն արդեն իսկ դիտարկվում է որպես շահույթ՝ առաջացնելով հարկային պարտավորություն պետության նկատմամբ: Այսինքն, կոոպերատիվը, դեռևս չկայացած, մտնում է ֆինանսական բեռի տակ, այն դեպքում, երբ ինքը ֆինանսական աջակցության կարիք ունի: Այստեղ կրկին անգամ առնչվում ենք այն խնդրի հետ, որ անհրաժեշտ է հանրապետու-

թյունում ունենալ առանձին օրենք կոոպերացիայի մասին, մինչդեռ, ելնելով այսօր հանրապետության համար գյուղատնտեսության գերակա ուղղությունից և որպես գյուղատնտեսության զարգացման կարևորագույն ուղի, օրենքը պետք է նախատեսի արտոնյալ պայմաններ կոոպերատիվների զարգացման համար:

Վերոնշյալ խնդիրների կարգավորման և ընդհանրապես կոոպերացիայի հետագա զարգացման համար կարևորվում է հետևյալ միջոցառումների իրականացումը.

1. Կոոպերացիայի վերաբերյալ առանձին օրենքի ընդունում, կամ սկզբնական փուլում առկա օրենքի կարգավորում, որը հնարավորություն կտա կոոպերատիվներին ֆինանսական աջակցություն ստանալու արտոնյալ վարկերի տեսքով: Այսօր սպառողական կոոպերատիվներին արգելված է վարկային ռեսուրսներից օգտվելը, քանի որ դրանք շահույթ հետապնդող կառույցներ չեն: Նման իրավիճակի ստեղծումն իրոք կխթանի կոոպերացիայի զարգացումը մեր հանրապետությունում:
2. Կոոպերատիվի ԱԱՀ-ի վճարման 58.35 մլն դրամի շեմը վերանայել՝ հաշվարկելով այն ոչ թե ամբողջ կոոպերատիվի, այլ նրա առանձին անդամների հաշվով: Այն ոչ միայն չի խրախուսում, այլ նաև խոչընդոտում է կոոպերատիվների զարգացմանը:
3. Կոոպերատիվները պետք է հարկվեն անդամների եկամտային մասով և ոչ թե շահութահարկով: Միջազգային այդպիսի փորձ կա (Հոլանդիա, Իտալիա, Ֆրանսիա): Այդ կոոպերատիվները շահույթ հետապնդող են, սակայն դրանց տրվում են զգալի հարկային արտոնություններ, որպեսզի զարգանան:
4. Շարունակել կոոպերատիվներին արտոնյալ պայմաններով տեխնիկայի տրամադրումը: Տրամադրված տեխնիկայի պահեստամասերի ներկրում, մեխանիզատորների պատրաստում և տեխնիկական սպասարկումների կազմակերպում կոոպերատիվների բազայի վրա:
5. Լրացուցիչ դասընթացների կազմակերպում կոոպերատիվների կազմակերպման սկզբունքների, իմաստի, առավելությունների, արոտավայրերի կառավարման, հաշվապահության և այլ առնչվող հարցերի վերաբերյալ:
6. Կոոպերատիվի ղեկավարների համար արտասահմանյան զարգացած երկրներում առաջավոր փորձի փոխանակ-

ման կազմակերպում, ուսումնասիրում և տարածում, ինչպես նաև արտասահմանյան կամավորական խմբերի հրավիրում և ընդգրկում կոոպերատիվի աշխատանքներում:

7. Իրացման խնդիրների թեթևացում՝ կոոպերատիվի արտադրանքի վերամշակման, պահպանման և իրացման ենթակառուցվածքների ստեղծմանն աջակցությամբ, հնարավորության դեպքում նաև պետական գնումների կազմակերպման միջոցով, որը լուրջ խթան կլինի կոոպերատիվների զարգացման համար: Այս ենթատեքստում նաև առկա սպանդանոցների օգտագործման ակտիվացում, դրանց հետագա ընդլայնում և այդ մշակույթի աստիճանական արմատավորում, որը կարևոր քայլ կլինի նաև սննդի անվտանգության և որակի բարելավման ուղղությամբ:
8. Կոոպերատիվներում անասունների արհեստական սերմնավորման ու տոհմային աշխատանքների իրականացման, կերային ռեսուրսների լավագույնս օգտագործման, կայուն կերային բազայի ստեղծման և օպտիմալ կերի ռացիոնի կիրառման, կենդանիների պահվածքի ու խնամքի առաջավոր մեթոդների ներդրման ու տարածման միջոցով աստիճանաբար հասնել կենդանիների մթերատվության նշանակալի աճի և անասնապահության արդյունավետության բարձրացման, գյուղաբնակների եկամուտների ավելացման և աղքատության կրճատման:

Գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և կայացման ներկա փուլում թերևս նպատակահարմար է զանգվածային լրատվության և տեղեկատվության միջոցներով հանրապետության յուրաքանչյուր բնակչին՝ և առաջին հերթին գյուղատնտեսական արտադրության, անմիջականորեն առնչվող պարզաբանել և նրանց գիտակցությանը հասցնել կոոպերացիայի և ագրարային կոոպերատիվների էությունը, հնարավորությունները, դրանց կազմավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև արդյունավետ գործունեություն իրականացնելու կոնկրետ ուղիները:

Պարտադիր պայման պետք է լինի դրանց կազմավորմանը պետության գործուն մասնակցությունն ու օժանդակությունը՝ հատկապես կազմավորման ներկայիս բարդ և դժվարին շրջանում:

Անգնահատելի դեր կխաղա այդ շրջանում որոշակի արտոնյալ պայմանների տրամադրումը, որոնց դեպքում պարտադիր պայման պետք է լինի դրանց շնորհիվ կոոպերատիվի տնտեսական գործունեության արդյունք հանդիսացող ցուցանիշների բարելավումը:

Ավելի մեծ տեղ պետք է հատկացվի կոոպերատիվների կազմավորման կոնկրետ, իրագործելի մեխանիզմների և ցուցանիշների մշակմանն ու կիրառմանը, դրանց ստեղծման գործում ներգրավվելով այդ գիտական աշխատողներին ու անձանց, ովքեր անհրաժեշտ փորձ ու գիտելիքներ ունեն:

Ի վերջո, ամեն ինչ պետք է սկսել այնքան ձգձգվող «Գյուղատնտեսության մեջ կոոպերացիայի մասին» օրենքի վերջնական տարբերակի մշակումից, ընդունումից և հրապարակումից:

Հանրապետությունում արդեն ձևավորված և գործող կոոպերատիվների (որոնք գլխավորապես անասնաբուծական ուղղվածություն ունեն) գործունեության բարելավման և դրանց օրինակելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է հնարավորինս արձագանքել կոոպերացման բնագավառի մասնագետ գիտնականների և պրակտիկների ցանկություններին և առաջարկություններին, որոնք պարբերաբար հրապարակվում են մամուլում կամ իրազեկվում զանգվածային լրատվության այլ միջոցներով (ծավալուն լինելու պատճառով դրանք այստեղ չեն բերվում):

Համոզված եմ, որ վերոնշյալը և դրա իրականացումը շոշափելիորեն կօգնի ներկա փուլում հանրապետության ագրարային ոլորտում կոոպերացիայի հետագա զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը:

Գրականություն

1. Concept paper of CARMAC Project, 2011
2. «Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից 2012-2013թթ. իրականացված մոնիտորինգի արդյունքները
3. «Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից ՀԳՌԿՄ ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքները, 2013թ.
4. Մելոյան Ա.Ս., Մելոյան Ս.Վ. «Անասնապահական կոոպերատիվների հիմնախնդիրները ՀՀ-ում»
5. Ծպնեցյան Հ.Ս. «Գյուղատնտեսությունում կոոպերացիայի ձևավորման խնդիրները», «Ագրոգիտություն», N4, 2003թ.
6. Սարուխանյան Ռ.Շ. «Կաթի հավաքման և համատեղ իրացման սպառողական կոոպերատիվների գործունեության արդյունավետությունը», «Ագրոգիտություն», N5-6, 2004թ.
7. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության օրենքը «ԽՍՀՄ-ում կոոպերացիայի մասին» ԽՍՀՄ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Խորհրդային Հայաստան», N141, 26 հունիսի 1990թ.
8. Закон Союза Советскиõ социалистическиõ республик «О коперации в СССР», «Известия», N160, 8 июня 1988 года

АННОТАЦИЯ

Левченко Акопян, *к.э.н., доцент*
Грачик Джавадян, *к.э.н., доцент*

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАЗВИТИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОЙ КООПЕРАЦИИ В РА В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ.

Ключевые слова – сельскохозяйственная кооперация, животноводство, кооперативы, государственная поддержка.

За последние 23 года, после экономической реформы в ряду с положительными сдвигами появились и ряд проблем, решение которых во многих случаях возможно с помощью усилий сельских жителей, почему нет, также в результате сочетания средств.Осуществление этой важной проблемы в отдельных случиях становится возможным посредством помощи различных международных организаций и частных лиц и финансовой поддержки. Первым результатам его применеия в Армении и экономическому толкования посвящена эта статья.

ANNOTATION

Levchenko Hakobyan, *Ph.D, Associate professor*
Hrachik Javadyan, *Ph.D, Associate professor*

SOME PROBLEMS CONCERNING THE DEVELOPMENT OF MODERN AGRICULTURAL COOPERATIVES

Key words: agricultural cooperatives, livestock, cooperatives, state assistance, rural communities.

Along with the positive results of economic reform, there came a number of problems during the last 23 years whose solution is possible by the efforts of the villagers and why not, by the combination of their measures and cooperation. Solutions of these problems basically become possible by the efforts and financial support of various international organizations and stakeholders. Current article is devoted to the first results and economic interpretation of applying above mentioned procedures.